


ԲԱԿՈՒՄՆՅԻ ՇԵՐՈՍԻ ՆՄԱՆ

...Պեղիրի հետ դանդաղ անցնում էինք դեռևս Մարի օրոք բացված սալահապակով, որը ժամանակին արքունի պալավն էր կապել Անիի Մայր Եկեղեցուն: Գեղանկարիչ, դիզայներ և նաև լուսանկարչական գործի հմուտ Սամվել Սևադան բակունցյան հնագետի համակ ուշադրությամբ ու գուրգուրանքով երբեմնի շեն Եկեղեցու պափից ընկած խոյակի վրայի փոշին էր մաքրում: Նա լուսանկարչական հիանալի աշխապանք կարարեց Կարսում և Անիում, որոնց արդյունքը կերևա՝ Գյումրիում, Կարսում և Լու Անջելեսում բացվելիք լուսանկարչական և գեղանկարչական աշխապանքների ցուցահանդեսներում: Գյումրիի հետ միասին պապահական չնշեցի Լու Անջելեսն ու Կարսը: Բանն այն է, որ Սամվելը երկար բարիներ բնակվել է Լու Անջելեսում, այնպես ունեցել իր արվեստանոցն ու հաճախակի բացվող ցուցահանդեսները, իսկ Կարսի առումով՝



բաղաքապետարանում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Գյումրիից, Անից և Կարսից արված լուսանկարների ցուցահանդես բացվի նաև Կարսում: Ես Պեղիրին ծանոթացնում եմ Սամվելի հետ, և երկուսով հեքևում ենք նրա աշխապանքներին:

Հանգապանալու փոքրիկ դադարին Սամվելը, Ամերիկայում կարարելագործած անգերենով, ուզեց Պեղիրին ներկայացնել մեր ազգի գրիչներին, ովքեր և մազաղաթյա մագյաններ ավելի ծեցին, և «հուշարար» էին քարագործ վարպետների համար, ովքեր ահա այս Եկեղեցիների վրա թողել են վավերագիր պապմություններ: Լավ է, որ Պեղիրն անգերեն գիտեր, և մենք Թաքումանի կարիքը չգացինք: Եվ իր պարմությունն անելուց առաջ Սամվելը նաև «դիմեց» պարմական իրադարձություններին:

– Կողեզա, - դիմեց նա Պեղիրին, - ես որքան ծանոթ եմ, ձեր մզկիթների վրա այդշափ արձանագրություններ չկան, որքան հայկական Եկեղեցիների վրա: Ես չգիտեմ, թե դա ինչից է:

Պեղիրի՝ զիսով հավանության նշանը սպանալով, Սամվելը շարունակեց.

- Բայց դրական եմ վերաբերվում շաբ արձանագրություններ թողնելու մերոնց ցանկությանը. նրանք անգամ իրենց կյանքին սպառնացող վրանգի պահին առաջնային են համարել պապմության համար վկայություն թողնելը:

Որպես ասածների հավասպում Սամվելը մի օրինակ բերեց. «Երբ Լենկ Թեմուրի գինվորները մտան վանք, գրիչը խնդրեց մի պահ սպասել, որ վերջին նախադասությունն ավարփի: Ու գրեց. «Ձեռքս զնա ի հոդ դառնա, գիրս մնա հիշապակող»: Տերագայում այդ նախադասությունը հայերին համար թևափոր խոսք դարձավ, դարձավ ազգային մնայուն արժեքների, գիր ու գրականության պահպանության խորհրդանիշ: Տաճախ այդ նախադասությամբ են գրից, մշակույթից հայացքը թեքած մարդկանց իրավիրում ողջախտիության, հորդորում են հայացքով դաշնալ դեպի գիրը, գրականությունը:

– Ահա այս արձանագրությունները, Պեղիր, մեզ համար, նաև մեզ համար են գրված՝ ինձ, քո, Տովիկի, բոլոր նրանց համար, ովքեր այս Եկեղեցիների գոյությամբ մեր անցյալի փառքն են վերիշում:

Այս իրավը Պեղիրը մի կերպ կուլ փվեց ու խուսափեց թեմայի շարունակությունից, հորինելով, թե՝ «Տաճույքով կշարունակեի գրույցը, բայց ես շրապեմ իմ ընկերոջ մոփ»: Ասաց

ու, բարեկրթության սահմանները չխախվելով, նոր հանդիպման ու զրոյցի շարունակության հրավեր արեց երեկոյան, արդեն հյուրանոցում:

Այդ զրոյցը շարունակվեր, թե չէ, որևէ բան չէր փալու մեզ՝ Պեղիրն իր ռեպորտաժներում հասպար դրա մասին չէր խոսելու: Բայց երբ նա մտերմիկ, մաքուր հայացքով հրաժեշտ փվեց մեզ, մենք, այսուհանդերձ, ուրախ էինք, որ նրա ռեպորտաժն Անիից այդ նույն մաքրությամբ ու մտերմությամբ կգրվի:

Մենք մնացինք երկուսով, ու Սամվելը շարունակեց իր գործը. նա նաև իր ապագա դեսաֆիլմի համար էր նյութեր հավաքում և ամեն եկեղեցու մոտ կանգնում էր երկար, հարհագույն կարահանում, լուսանկարում դեռևս պահպանված արձանագրությունները:

– Իմ ապագա դեսաֆիլմի այս կադրերի վրա դերասանական ինչ խոսք կդնես,- կարծես արդեն համաձայնություն կա համարեղ ֆիլմ պարբռասփելու՝ առանց նախարանի ինձ դիմեց Սամվելը:

– Եթե ես եմ զրելու քո ապագա ֆիլմի սցենարը, ուրեմն իմացիր, որ այդ կադրերի վրա արդեն դերասանական պարբռասփի խոսքը կա:

– Երա՞վ,- զարմանում է Սամվելը՝ շարունակելով պարզվել Գագկաշեն եղեղեցու շուրջը, նոր արձանագրություններ գդնելու հույսով,- և ո՞րն է այդ գերազանցությունը:

– Արման Կոթիկյանի բանասպեղծությունը:

Սամվելը զարմացավ ոչ յեն նրանից, որ իր առաջարկին պարբռասփ պարագան ունեմ, այլ որ հայրնի դերասան Արման Կոթիկյանը բանասպեղծություններ էլ ունի զրած:

– Արման Կոթիկյանը,- առաջարկս ամրապնդեցի ես,-ճիշտ այն մարդկանց մասին է զրել, ովքեր մեր դպրությունն են սպեղծել, ովքեր շարունակել են դպրության պահպանության առաքելությունը, եվ դո, Սամվել, ենց հիմա այս եկեղեցու վրա կարդում ես դպրության նմուշներ՝ երևակայորեն պարկերացնելով դրանք գրող Վարպետիներին: Ահա հենց Կոթիկյանի բանասպեղծությունն էլ քո ֆիլմի համար, մի քիչ ալեգորիկ, բայց շատ համահունչ գերսադ:

«Դեմքերը նախնի պապերիս
Տեսնում եմ և վեհ և խոռվ.
Դպիրներ՝ նստած քրիստոնությունը
Բերում են փառքերը մեր հին,
Անսպառ զանձերը բոլոր:

Դպիրներ, դրվում, վշրակիր,
Դպրության հայրեր խանդակաթ...
Յնցուղեք ձեր լույսը բարի
Իմ հոգուն որպես արեգակ...
Երգերիս ծիլը երկարի՝
Ուժանամ ձեր շողերի դպակ»:

Ափսոս, Պեղիրին չխացրինք այս բանասպեղծությունը ներկայացնել, չկարողացանք պարմել, որ ահա այսպիսին են Անի եկող հայերը, ովքեր միշտ չեն, որ առիթ են ունենում նման այցելության և դրա համար են այսպես ազահորեն ամեն ինչ փորձում ընկալել: Մեզ համար այսպեղ ամեն ինչ է հարազար:



Շարունակելի